# ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«Արդարադատության ակադեմիա»**

**պետական ոչ առևտրային կազմակերպության**

**2025 թվականի գործունեության մասին**

**ԵՐԵՎԱՆ 2026**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3
II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ ..... 5
1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում ..... 5
2. Մասնագիտական պատրաստում ..... 7
III. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ_ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ ..... 8
1. Վերապատրաստում ..... 8
2. Մասնագիտական պատրաստում ..... 11
3. Հատուկ ուսուցում ..... 14
IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ ..... 16
1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրերի նախագծերի մշակում ..... 16
2. Առարկայական ծրագրերի մշակում ..... 17
3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում ..... 18
4. Առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում ..... 19
5. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում ..... 20
6. Ընթացիկ այլ աշխատանքներ ..... 23
V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏՏ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ..... 25
1. Ընդհանուր տեղեկություններ ..... 25
2. Հեռաուսուցման դասընթացներ ..... 25
3. Ընդհանրացված ամփոփում ..... 28
VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ..... 29
VII. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ..... 35
1. Եկամուտներ ..... 35
2. Ծախսեր ..... 35
VIII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ ..... 37
IX. ԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ..... 38

## Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի ընթացքում, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) որոշումներով, այլ իրավական ակտերով և համագործակցության հուշագրերով ու համաձայնագրերով՝ Ակադեմիան իր գործունեության նպատակների և խնդիրների կենսագործման ուղղությամբ՝

- կազմակերպել և անցկացրել է որակավորման ստուգման արդյունքներով դատախազների, ՀՀ քննչական կոմիտեում և Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում, ինչպես նաև վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման կազմակերպում.

- կազմակերպել և անցկացրել է դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի և Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների, դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց և դատական կարգադրիչների վերապատրաստում, ինչպես նաև դատախազների և քննիչների լրացուցիչ վերապատրաստում.

- կազմակերպել է դատավորների, դատախազների, քննիչների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.

- կնքել է պայմանագրեր և արդյունավետորեն համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, միջազգային կազմակերպությունների հետ.
- մշակել և շրջանառության մեջ է դրել ուսումնամեթոդական նյութեր՝ համապատասխան կրթական ծրագրերի իրականացման համար.
- հրապարակել է «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հերթական համարները.
- իր գործունեության նպատակներին համապատասխան՝ իրականացրել է Ակադեմիայի կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեություն և այլ աշխատանքներ:

Հաշվետու տարվա ընթացքում, ինչպես և նախորդ տարիներին, գործունեության տարբեր բնագավառներում իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը գլխավորապես նպատակաուղղված են եղել խթանելու Ակադեմիայի առաջընթացը, ապահովելու ուսումնական գործընթացի բարելավումն ու զարգացումը և ուսուցման որակի բարձրացումը:

Հաջորդիվ հանգամանորեն ներկայացվում է Ակադեմիայի 2025 թվականի գործունեությունն՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և ոլորտների:

## II. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստում.
2) վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման կազմակերպում.
3) դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում.
4) դատավորների հատուկ ուսուցում:

### 1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում

- **Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում.**

«Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 15-ի ԿԽ-011/24/1 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում՝ ***2 հատվածով, 24 խմբով***:

Խմբերում ընդգրկվել է ***9-42 դատավոր***: Ծրագիրն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հեռավար մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացները կազմակերպվել են ուսուցման հեռավար, իսկ ընդհանուր և հարակից ու հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկվածները՝ առկա ուսուցման ձևով: Ուսումնառության ժամկետը կազմել է ***40–ական*** ակադեմիական ժամ:

Ընդհանուր և հարակից մասնագիտական առարկաներով դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման դասընթացներն իրականացվել են 2025թ. մարտի 31-ից մայիսի 30-ը, հատուկ մասնագիտական առարկաներով՝ սեպտեմբերի 01-ից դեկտեմբերի 12-ը:

***Հայտով ներկայացվել է 361 ունկնդիր: Նրանցից վերապատրաստում են անցել 345ը, որոնցից 38-ը՝ Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք:***

- **Դատավորների հատուկ ուսուցում.**

Դատավորների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են ***2 խմբով՝ 6-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ՝ 13.09.2025թ. և 20.09.2025թ.:

***Հայտով ներկայացվել է 83 դատավոր, որոնցից հատուկ ուսուցմանը մասնակցել են 29-ը:***

- **Դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում.**

«Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 15-ի ԿԽ-011/24/2 որոշման հավելված 1-ի հիման վրա իրականացվել է դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում՝ ***24-26*** ակադեմիական ժամ տևողությամբ: Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացներն իրականացվել են ***առցանց*** (ZOOM հավելվածի միջոցով)՝ մայիսի 05-ից հունիսի 26-ը: Դասընթացները կազմակերպվել են ***8 խմբով***: Խմբերում ընդգրկվել է ***8-30*** դատական կարգադրիչ: Ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն:

***Հայտով ներկայացվել է 186 դատական կարգադրիչ: Վերապատրաստումն անցել է 166 դատական կարգադրիչ:***

## 2. Մասնագիտական պատրաստում

- «Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների վարչական և քրեական մասնագիտացման բաժինների 2024 թվականի ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2024թ. նոյեմբերի 15-ի ԿԽ-011/24/3 որոշման հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2024թ. ցուցակում ընդգրկված ***5 անձ***:

***Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառել է փորձաշրջանը Վերաքննիչ վարչական և Վերաքննիչ քրեական դատարաններում: Փորձաշրջանը սկսվել է 2025թ. հունվարի 20-ին և ավարտվել փետրվարի 07-ին:***

- «Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության ենթաբաժինների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» Ակադեմիայի կառավարման խորհրդի 2025թ. ապրիլի 03-ի ԿԽ-003/25/1 որոշման հիման վրա մասնագիտական պատրաստում է անցել առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների 2025թ. ցուցակում ընդգրկված ***7 անձ***:

***Գործնական հմտությունների զարգացման մասով ուսուցումը ներառել է փորձաշրջան՝ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանում: Փորձաշրջանը սկսվել է 2025 թ. ապրիլի 14-ին և ավարտվել մայիսի 2-ին***:

## III. ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) դատախազների վերապատրաստում.
2) դատախազների լրացուցիչ վերապատրաստում.
3) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստում.
4) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ վերապատրաստում.
5) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստում.
6) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
7) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
8) դատախազների հատուկ ուսուցում.
9) ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցում:

### 1. Վերապատրաստում

- **Դատախազների վերապատրաստում.**

✓ Խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի ԿԽ-012/24/3 որոշմամբ հաստատված «Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների վերապատրաստումն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով:

Դատախազների ընդհանուր և հարակից մասնագիտական ու հատուկ մասնագիտական դասընթացների ուսումնառության (առկա) ժամաքանակը կազմել է ***40-ական*** ակադեմիական ժամ:

Դասընթացները կազմակերպվել են հետևյալ ժամանակացույցին համապատասխան՝

*ա) ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացներ՝* ***5 խումբ****՝ 07.04.–08.05.2025թ.,*

*բ) հատուկ մասնագիտական դասընթացներ՝* ***12 խումբ****. 1-ից 11-րդ խմբերը՝ 01.09.-14.11.2025թ., 12-րդ խումբը (պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող դատախազների վերապատրաստման դասընթացներ)՝ 31.03.-13.05.2025թ.,*

*գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներ՝* ***2 խումբ****՝ 1-ին խումբ՝ 01.09.-26.09.2025թ., 2-րդ խումբ՝ 20.10.-24.10.2025թ.:*

Խմբերում ընդգրկվել է ***10-29*** դատախազ:

***Հայտով ներկայացվել է՝***

*ա) ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացներով՝* ***126*** *դատախազ,*

*բ) հատուկ մասնագիտական դասընթացներով՝* ***230*** *դատախազ,*

*գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներով՝* ***4*** *դատախազ:*

***Վերապատրաստում անցել է՝***

*ա) ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացներով՝* ***113*** *դատախազ,*

*բ) հատուկ մասնագիտական դասընթացներով՝* ***209*** *դատախազ,*

*գ) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներով՝* ***4*** *դատախազ:*

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստում.**

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 31-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) վերապատրաստման

ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների ուսումնառության ժամաքանակը կազմել է ***24,*** իսկ ՀՀ քննչական կոմիտեի մյուս քննիչներինը՝ ***30*** ակադեմիական ժամ:

ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների դասընթացներն իրականացվել են ***4 խմբով՝*** 19.05.-02.07.2025թ.:

ՀՀ քննչական կոմիտեի մյուս քննիչների դասընթացներն իրականացվել են ***12 խմբով՝*** 03.03.-24.07.2025թ.:

Խմբերում ընդգրկվել է ***15-27*** քննիչ:

***Հայտով ներկայացվել է 255 քննիչ և 73 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ: Վերապատրաստում անցել է 236 քննիչ և 68 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչ:***

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ վերապատրաստում.**

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025թ. հունվարի 31-ի որոշմամբ հաստատված «ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 2025 թվականի լրացուցիչ վերապատրաստման ծրագրի» հիման վրա քննիչների լրացուցիչ վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց լրացուցիչ վերապատրաստման ժամաքանակը կազմել է ***30*** ակադեմիական ժամ: Դասընթացներն իրականացվել են 12.05.-24.07.2025թ.:

***Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 7 անձ, վերապատրաստում անցել է 5 անձ:***

- **ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստում:**

✓ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2024 թ. նոյեմբերի 15-ի թիվ 35-Լ հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմի-

տեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ուսումնառության ժամաքանակը կազմել է ***60*** ակադեմիական ժամ:

Դասընթացներն իրականացվել են ***2 խմբով***՝ 03.02.-27.02.2025թ.:

***Հայտով ներկայացվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող 23 անձ, որոնք հաջողությամբ անցել են վերապատրաստումը:***

## 2. Մասնագիտական պատրաստում

- **Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.**

✓ Խորհրդի 2025թ. հունիսի 20-ի ԿԽ-005/25 որոշմամբ հաստատված «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվում է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

Ուսումնառության ժամաքանակը կազմում է ***1004*** ակադեմիական ժամ, որից ***180-ը***՝ դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***820-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվում է **1 *խմբով***՝ 30.06.2025թ.-06.02.2026թ.:

***Հայտով ներկայացվել է 15 անձ, որոնց մասնագիտական պատրաստումն ընթացքի մեջ է:***

✓ Խորհրդի 2025թ. հունիսի 24-ի ԿԽ-007/24 որոշմամբ հաստատված «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է <u>պետական (համայնքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող</u> դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***1204*** ակադեմիական ժամ, որից ***200-ը***՝ դասընթացների, ***4-ը***՝ քննաշրջանի, ***1000-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է ***1 խմբով***՝ 01.07.2024թ.- 07.02.2025թ.:

***Հայտով ներկայացվել է 5 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:***

✓ Խորհրդի 2025թ. մայիսի 26-ի ԿԽ-004/25 որոշմամբ հաստատված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (1-ին խումբ) մասնագիտական պատրաստում:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***122*** ակադեմիական ժամ, որից ***80-ը***՝ դասընթացների, ***2-ը***՝ քննաշրջանի, ***40-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է ***1 խմբով***՝ 27.05.-27.06. 2025թ.:

***Հայտով ներկայացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 2 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:***

✓ Խորհրդի 2025թ. հոկտեմբերի 1-ի ԿԽ-007/25 որոշմամբ հաստատված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց 2-րդ խմբի մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (2-րդ խումբ) մասնագիտական պատրաստում:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***122*** ակադեմիական ժամ, որից ***80-ը***՝ դասընթացների, ***2-ը***՝ քննաշրջանի, ***40-ը***՝ փորձաշրջանի ժամաքանակը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է ***1 խմբով***՝ 08.10.-07.11.2025թ.:

***Հայտով ներկայացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 3 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:***

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.**

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025թ. հունվարի 30-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 1-ին խմբի մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (1-ին խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***110*** ակադեմիական ժամ, որից ***104-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***1 ամիս*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 10.02.-25.04.2025թ.:

***Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 27 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:***

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025թ. ապրիլի 30-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 2-րդ խմբի մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի»

հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (2-րդ խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***110*** ակադեմիական ժամ, որից ***104-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***1 ամիս*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 19.05.-30.07.2025թ.:

***Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 34 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:***

✓ ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025թ. հունիսի 11-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց 3-րդ խմբի մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց (3-րդ խումբ) մասնագիտական պատրաստում՝ առկա ուսուցման ձևով:

Ուսումնառության ժամաքանակը կազմել է ***110*** ակադեմիական ժամ, որից ***104-ը***՝ դասընթացները, ***6-ը***՝ քննաշրջանը, ինչպես նաև ***1 ամիս*** փորձաշրջանը: Մասնագիտական պատրաստումը կազմակերպվել է 14.07.-25.09.2025թ.:

***Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված 18 անձ, որոնք հաջողությամբ ավարտել են մասնագիտական պատրաստումը:***

## 3. Հատուկ ուսուցում

- **Դատախազների հատուկ ուսուցում.**

Խորհրդի 2024 թվականի դեկտեմբերի 19-ի ԿԽ-012/24/3 որոշմամբ հաստատված «Դատախազների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների հատուկ

ուսուցման դասընթացներն անցկացվել են ***2 խմբով՝ 6-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ՝ 04.10.2025թ. և 11.10.2025թ.:

***Հայտով ներկայացվել է 45 դատախազ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել են 34-ը:***

- **ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցում.**

ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 2025թ. հունվարի 31-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են 3 ***խմբով՝ 10-ական*** ակադեմիական ժամ տևողությամբ՝ 12.07.-26.07.2025թ.:

***Հայտով ներկայացվել է 60 քննիչ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել են 45-ը:***

## IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) մասնագիտական պատրաստման, վերապատրաստման, լրացուցիչ վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում,
2) դասընթացավարների հետ համատեղ առարկայական ծրագրերի մշակում,
3) մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցերի մշակում,
4) առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում,
5) աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում, դրանց առնչվող նյութերի մշակում,
6) ընթացիկ այլ աշխատանքներ:

### 1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրերի նախագծերի մշակում

- **Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և վերանայվել են ուսուցման հետևյալ ծրագրերի (ընդհանուր առմամբ՝ 16) նախագծերը.**

✓ դատախազների, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների իրականացնող դատախազների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց ***մասնագիտական պատրաստման - 6***,

✓ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների), Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեց-

նող անձանց (քննիչների), ինչպես նաև դատական կարգադրիչների ***վերապատրաստման - 5***,

- ✓ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) ***լրացուցիչ վերապատրաստման – 1***,
- ✓ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների), դատական կարգադրիչների ***հատուկ ուսուցման – 4***:

Վերոհիշյալ նախագծերը մշակելիս հիմք են ընդունվել ներպետական և միջազգային մի շարք իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև հաշվի են առնվել շահագրգիռ գերատեսչությունների կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված առաջարկությունները:

## 2. Առարկայական ծրագրերի մշակում

«Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաստատված և 2025 թվականի տարեկան ծրագրերով նախատեսված առարկայացանկի և կրթական չափորոշիչների հիման վրա Բաժինը, դասընթացավարների հետ համատեղ, իրականացրել են թվով ***27 առարկայական ծրագրերի*** մշակման և վերամշակման աշխատանքներ: Վերամշակված առարկայական ծրագրերի հիմքում դրվել են նախորդ տարիներին մշակված ծրագրերը:

Հաշվետու ժամանակահատվածում ***վերամշակվել են ընդհանուր առմամբ 27*** հետևյալ առարկայական ծրագրերը՝

- ✓ դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ***տարեկան վերապատրաստման – 2,***
- ✓ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) ***տարեկան վերապատրաստման – 4***,
- ✓ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2025թ. ցուցակում ընդգրկված անձանց ***մասնագիտական պատրաստման – 4,***

- ✓ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ***մասնագիտական պատրաստման – 2,***
- ✓ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց ***մասնագիտական պատրաստման – 15:***

Առարկայական ծրագրերը մշակելիս (վերամշակելիս)՝ հիմք են ընդունվել իրավունքի ոլորտում առկա զարգացումները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական նոր դիրքորոշումները, ինչպես նաև ՀՀ-ում ընթացող դատաիրավական բարեփոխումները և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել խնդրահարույց հարցերը: Այդ կապակցությամբ իրականացվել է համապատասխան ոլորտի բազմակողմանի ուսումնասիրություն՝ նշված ծրագրերն Ակադեմիայի գործունեության նպատակներին և ունկնդիրների պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու համար:

## 3. Մասնագիտական պատրաստման ընթացքում ունկնդիրներին հանձնարարվող քննական նյութի, գնահատման չափանիշների և ուղեցույցների մշակում

Դատավորների, դատախազների, քննիչների թեկնածությունների համապատասխան ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման արդյունքների գնահատման համար իրականացվել է մասնագիտական պատրաստման ծրագրերում ներառված առարկայական կուրսերի (դասընթացների) քննական նյութի կազմում, քննական առաջադրանքների տիպային պատասխանների մշակում:

***Ընդհանուր առմամբ իրականացվել է 21 դասընթացի քննական նյութի մշակում: Մասնավորապես՝***

- ✓ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների 2025թ. ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***4,***

- ✓ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***2,***
- ✓ ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննիչների) թեկնածությունների 2025 թվականի ցուցակում ընդգրկված անձանց քննությունների համար – ***15:***

## 4. Առարկայական նոր կուրսերի (դասընթացների) և ուսումնամեթոդական նյութերի (ձեռնարկների) մշակում

***Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ընդհանուր առմամբ 6 հետևյալ նոր դասընթացները՝***

- ✓ Դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց ***տարեկան վերապատրաստման – 2՝***
  1) J-G-016-26 – Կարգապահական պատասխանատվության մեխանիզմների բարելավումը՝ որպես արտակարգ դատական վեթինգի այլընտրանք,
  2) J-CR-015-26 – Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ քրեական վարույթներով զոհակենտրոն մոտեցումների և զոհակենտրոն քննության ապահովում.
- ✓ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց ***տարեկան վերապատրաստման – 4՝***
  1) IAC-003-26 – Գույքի բռնագանձման և փողերի լվացման ոլորտների օրենսդրություն,
  2) IAC-004-26 – Հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտներ,
  3) IAC-005-26 – Քրեագիտություն,
  4) IAC-006-26 – Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտեր, վերաբերելի նախադեպային որոշումներ:

## 5. Աշխատաժողովների, հրավիրյալ մասնագետների դասախոսությունների, սեմինարների և վերապատրաստումների կազմակերպում

- Հունվարի 18-ին և 19-ին Արդարադատության Ակադեմիայի և Ռաուլ Վալլենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի համագործակցության շրջանակում Ծաղկաձորում անցկացվել է ***աշխատաժողով***՝ նախատեսված իրավապահ և արդարադատության ոլորտի ներկայացուցիչների համար, որոնք հանդիսանում են Արդարադատության ակադեմիայի դասընթացավարներ: Աշխատաժողովը վարում էր իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աննա Մարգարյանը:
- Փետրվար-մարտ ամիսներին Ակադեմիան Եվրոպայի խորհրդի հետ համատեղ՝ ԵԽ «Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարման շարունակական աջակցություն» ծրագրի շրջանակներում անցկացրել է ***վերապատրաստումների շարք*** դատավորների համար՝ նվիրված «ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի կիրառման գործնական խնդիրներին»՝ առանձնակի ուշադրություն դարձնելով քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ գլխով նախատեսված մասնավոր մեղադրանքով վարույթի կապակցությամբ քրեական հայցերի դատական կարգով պատշաճ քննության հիմնահարցերին: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են նշված թեմայով մասնագիտացված դատավորներ:
- Ապրիլի 7-ին Արդարադատության ակադեմիա է այցելել Ֆրանսիայի հեղինակավոր իրավաբանների պատվիրակությունը: Պատվիրակության կազմում էին Փաստաբանների պալատի ղեկավար Պիեռ Լաֆոնտը, Մարդու իրավունքների ինստիտուտի ղեկավար, փաստաբան Ամինե Ֆարաջը, Փաստաբանների պալատի նախկին ղեկավար Միշել Տիսսեյրը, հայազգի փաստաբան Նաիրա Զորոյանը: Այցի շրջանակում Փաստաբանների պալատի նախկին ղեկավար Միշել Տիսսեյրը հանդես է եկել Ակադեմիայում վերապատրաստում անցնող դատավորների համար նախատեսված դասախոսությամբ:

- Ապրիլի 11-ից 12-ը Արդարադատության ակադեմիան Շվեդիայի Ազգային դատարանների ադմինիստրացիայի հետ համատեղ՝ «Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» Շվեդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող հայ-շվեդական բազմամյա ծրագրի շրջանակում Ծաղկաձորում անցկացրել է ***վերապատրաստում*** դատավորների համար՝ նվիրված մեդիա հաղորդակցությանը: Վերապատրաստումն անցկացրել են ազգային փորձագետ Արփինե Հովհաննիսյանը և նրա՝ ոլորտի հեղինակավոր շվեդ գործընկերները:
- Ապրիլի 16-18-ը Արդարադատության ակադեմիան Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի դեսպանատան և «Էքսպերտիզ ֆրանս» միջազգային փորձագիտական գործակալության հետ համատեղ կազմակերպել է «Հայաստանում շրջակա միջավայրի դատական պաշտպանություն» վերտառությամբ ***3-օրյա դասընթաց***: Դասընթացը, որին մասնակցում էին ոլորտում մասնագիտացած դատավորներ, դատախազներ, քննիչներ, ինչպես նաև միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, վարել են Վերսալի վերաքննիչ դատարանի առաջին նախագահ և Արդարադատության գլխավոր տեսչության նախկին ղեկավար Ժան Ֆրանսուա Բենելը, իրավաբանական գիտությունների դոկտոր և շրջակա միջավայրի իրավունքի փաստաբան Լոռ Աբրամովիչը, Էքս ան Պրովանսի դատարանի դատախազ Դելֆին Ագոգեն, պատվավոր դատավոր և բնապահպանական արդարադատության փորձագետ Վենսան Դելբոսը, քրեական իրավունքի և շրջակա միջավայրի իրավունքի փաստաբան Լոռա Մոնիեն, ՀՀ վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանը, Բնապահպանական իրավունքի փորձագետ Օլիմպիա Գեղամյանը:
- Հունիսի 24-ին Արդարադատության ակադեմիայի և Շվեդիայի Ազգային դատարանների ադմինիստրացիայի կողմից համատեղ կազմակերպվել է «Դատարաններում խտրականության արգելման և հավասար վերաբերմունքի ապահովման» թեմայով ***աշխատաժողով***՝ նախատեսված բոլոր ատյանների և մասնագիտացումների դատա-

վորների համար: Աշխատաժողովը վարում էին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանը և Շվեդիայի վարչական դատարանի դատավոր Ջենիֆեր Մուր Փիթերսոնը:

- Հունիսի 28-ին Արդարադատության ակադեմիայի և ՀՀ Հաշտարարների պալատի կողմից համատեղ կազմակերպվել է «Պարտադիր հաշտարարության գործարկման առանձնահատկությունները, գործող կարգավորումները» թեմայով ***վերապատրաստում:*** Վերապատրաստումը, որը նախատեսված էր քաղաքացիական մասնագիտացմամբ դատավորների համար, վարում էին ՀՀ Հաշտարարների պալատի նախագահ Գայանե Դեմիրչյանը և Պալատի խորհրդի անդամներ Անի Համբարձումյանն ու Դավիթ Ղարիբյանը:
- Սեպտեմբերի 26-ին Արդարադատության ակադեմիայում տեղի է ունեցել միջազգային ***համաժողով՝*** «Դրամական միջոցների լվացման օրինականացումը» թեմայով: Համաժողովին, որը կազմակերպվել էր Արդարադատության ակադեմիայի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից համատեղ, մասնակցում էին Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետությունների Գերագույն (բարձրագույն) Դատարանների Նախագահների Խորհրդի ներկայացուցիչները: Համաժողովին, որի նպատակն էր ներկայացնել և քննարկել թեմայի էությունը և քրեական օրենսգրքի՝ փողերի լվացման մասին հոդվածի կիրառման գործնական մարտահրավերները, հրավիրված էին իրավունքի ոլորտի առաջատար փորձագետներ, դատավորներ և գործող փաստաբաններ:
- Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Արդարադատության ակադեմիան Եվրոպայի խորհրդի գործընկերների հետ համատեղ՝ ԵԽ «Աջակցություն Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների արդյունավետ կատարմանը» ծրագրի շրջանակում անցկացրել է ***վերապատրաստումների շարք***՝ նվիրված «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրառման գործնական խնդիրներին»: Դասընթացը վարել է ԵԽ ազգային փորձագետ Դավիթ Մելքոնյանը: Վերապատրաստման դասընթացին մասնակցել են քրեական մասնագիտացմամբ դատավորներ:

- Նոյեմբերի 5-ից 6-ը Արդարադատության ակադեմիան Շվեդիայի Ազգային դատարանների ադմինիստրացիայի հետ համատեղ՝ «Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» Շվեդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող հայ-շվեդական բազմամյա ծրագրի շրջանակում Դիլիջանում անցկացրել է ***վերապատրաստում*** դատավորների համար՝ նվիրված մեդիա հաղորդակցությանը: Վերապատրաստումն անցկացրել են ազգային փորձագետ Արփինե Հովհաննիսյանը և նրա՝ ոլորտի հեղինակավոր շվեդ գործընկերները:
- Նոյեմբերի 21-ին Արդարադատության ակադեմիայում տեղի է ունեցել ***կլոր սեղան-քննարկում՝*** նվիրված «Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթ (հեռակա վարույթ)» թեմային: Կլոր սեղանին, որը կազմակերպվել էր Արդարադատության ակադեմիայի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից համատեղ, մասնակցել են Ռուսաստանի արդարադատության պետական համալսարանի, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետությունների Գերագույն (բարձրագույն) Դատարանների Նախագահների Խորհրդի ներկայացուցիչները: Քննարկմանը մասնակցել են դատավորներ և ոլորտի առաջատար փորձագետներ:
- Նոյեմբերի 28-ից 29-ը Աղվերանում Արդարադատության ակադեմիայի և «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի կողմից համատեղ անցկացվել է ***աշխատաժողով՝*** «Ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը ՀՀ-ում» թեմայով: Աշխատաժողովին, որը վարել են Արդարադատության ակադեմիայի ռեկտոր Սերգեյ Առաքելյանը և ոլորտի մասնագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու Մուշեղ Բաբայանը, մասնակցել են դատավորներ քննիչներ և փաստաբաններ:

## 6. Ընթացիկ այլ աշխատանքներ

Բաժինն իրականացրել է նաև ընթացիկ այլ աշխատանքներ: Մասնավորապես՝

- մշակվել են Ակադեմիայի ներքին և անհատական ակտերի, այլ փաստաթղթերի նախագծերը, այդ թվում՝
  - ✓ Ակադեմիայի ռեկտորի հրամանների,
  - ✓ Ակադեմիայի և Հայաստանի Հանրապետության Հաշտարարների պալատի միջև համագործակցության, Ակադեմիայի և Շրջակա միջավայրի նախարարության միջև փոխըմբռնման հուշագրերի,
  - ✓ Ակադեմիային հասցեագրված գրությունների պատասխանների,
  - ✓ Ակադեմիայի՝ որպես առաջատար կազմակերպության կարծիքների.
- բաժնի աշխատակիցները մասնակցել են ներպետական և միջազգային գործընկերների կողմից կազմակերպված մի շարք միջոցառումների.
- նախապատրաստվել են Ակադեմիայի գիտական խորհրդի, ինչպես նաև «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի խմբագրական խորհրդի նիստերը.
- ստացվել և հաշվառվել են «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսում տպագրելու համար հեղինակների ուղարկած նյութերը, վերահսկվել է ստացվող հոդվածների ձևավորմանը ներկայացվող պահանջների ապահովումը, պահպանվել են հոդվածները, դրանց գրախոսականները:

## V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՏՏ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

### 1. Ընդհանուր տեղեկություններ

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

- իրականացվել են հեռաուսուցման մի շարք դասընթացներ և ծրագրեր,
- ուսումնասիրվել, քննարկվել և փորձարկվել են տարաբնույթ փորձարարական նորարական թվային լուծումներ, ժամանակակից կրթական մեթոդոլոգիաներ և մեթոդներ,
- ձևավորվել են օտարերկրյա և միջազգային գործընկերների հետ համագործակցության նոր հեռանկարներ,
- կազմակերպվել և իրականացվել է ունկնդիրների կողմից հեռաուսուցման ներդրված դասընթացների էլեկտրոնային գնահատում,
- նախաձեռնվել և իրականացվել են ուսուցման գործընթացի և Ակադեմիայի կառավարման խորհրդի նիստերի առցանց կազմակերպման և տեխնիկական ապահովման աշխատանքներ,
- գործունեություն է ծավալվել հեռաուսուցման ոլորտում առաջատար մասնագետների ու կազմակերպությունների հետ կապերը զարգացնելու ուղղությամբ:

### 2. Հեռաուսուցման դասընթացներ

2025 թվականի սեպտեմբերի 16-ից նոյեմբերի 26-ը կազմակերպվել և իրականացվել են հեռաուսուցման հետևյալ դասընթացները՝

1) «Փաստարկում և հռետորաբանություն»,
2) «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում»,
3) «Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները»,
4) «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը»,

5) «Դատավորի վարպետություն և դատական էթիկա»,
6) «Միջազգային աշխատանքային իրավունք»:

Վերը նշված դասընթացներին մասնակցության ***հայտ են ներկայացրել 159 դատավոր*** և ***դատախազ,*** որոնց առաջարկվել է կոնկրետ դասընթացի շրջանակներում ապահովել մասնակցություն՝ պատասխանելով ինքնաստուգիչ հարցերի:

Յուրաքանչյուր դասընթացի ***տևողությունը 10 շաբաթ էր:*** Մասնակցելով նշված դասընթացներից յուրաքանչյուրին՝ ունկնդիրները հնարավորություն են ունեցել անցնել ***40 ակադեմիական ժամին*** համարժեք վերապատրաստում:

- **«Փաստարկում և հռետորաբանություն»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***20 դատավոր*** և ***12 դատախազ:***

***Դատավորներից բոլորն*** ապահովել են ***40*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

***Դատախազներից 8-ն*** ապահովել են ***40***, ***1-ը՝ 36***, իսկ ***3-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

***Դատավորներից 4-ը***, իսկ ***դատախազներից 2-ն*** ապահովել են ***100%-անոց*** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին:

***11 դատավոր*** և ***6 դատախազ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***: Մյուս բոլոր դատավորները և դատախազները ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- **«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***14 դատավոր*** և ***29 դատախազ***:

***Դատավորներից 12-ն*** ապահովել են ***40***, իսկ ***2-ը՝ 36*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

***Դատախազներից 21-ն*** ապահովել են ***40***, իսկ ***8-ը՝ 36*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

***Դատավորներից 8-ը***, իսկ ***դատախազներից 2-ն*** ապահովել են ***100%-անոց*** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին:

***2 դատավոր*** և ***13 դատախազ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***: Մյուս բոլոր դատավորները և դատախազները ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- **«Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել է ***29 դատախազ***:

***Մասնակիցներից 14-ն*** ապահովել է ***40***, ***8-ը՝ 36***, իսկ ***7-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Նրանցից ***ոչ ոք չի կարողացել ապահովել 100-անոց*** արդյունք:

***Դատախազներից 3-ը*** ճիշտ է պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, իսկ մյուսները՝ ***50-89%-ին***:

- **«Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***3 դատավոր*** և ***24 դատախազ:***

***Դատավորներից 2-ն*** ապահովել են ***40***, իսկ ***1-ը՝ 36*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

***Դատախազներից 16-ն*** ապահովել են ***40***, ***2-ը՝ 36***, իսկ ***6-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

***Դատավորներից 1-ը***, իսկ ***դատախազներից 3-ն*** ապահովել են ***100%-անոց*** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին:

***1 դատավոր*** և ***6 դատախազ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***: Մյուս բոլոր մասնակիցները ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

- **«Դատավորի վարպետություն և դատական էթիկա»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել է ***26 դատավոր***:

Նրանցից ***19-ը*** ապահովել են ***40***, ***4-ը՝ 36***, իսկ ***3-ը՝ 32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Մասնակիցներից ***2-ն*** ապահովել են ***100%-անոց*** արդյունք՝ ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին:

***Դատախազներից 6-ը*** ճիշտ է պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-99%-ին***, իսկ մյուսները՝ ***50-89%-ին***:

- **«Միջազգային աշխատանքային իրավունք»** դասընթացին մասնակցելու համար հայտագրվել են ***2 դատախազ***, որոնցից ***1-ը*** ապահովել է ***40***, իսկ մյուսը՝ ***32*** ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:

Մասնակիցներից ***ոչ ոք չի կարողացել ապահովել 100 կամ 90-99%-անոց*** արդյունք: Նրանք բոլորը ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50-89%-ին***:

## 3. Ընդհանրացված ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում հեռաուսուցման «Փաստարկում և հռետորաբանություն», «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում», «Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները», «Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը», «Դատավորի վարպետություն և դատական էթիկա», ինչպես նաև «Միջազգային աշխատանքային իրավունք» դասընթացների շրջանակներում վերապատրաստվելու ***հայտ*** է ներկայացրել ընդհանուր առմամբ ***159*** ունկնդիր ***(63 դատավոր*** և ***96 դատախազ)***: Ընդ որում, ***բոլոր մասնակիցներին*** հաջողվել է բավարարել վերապատրաստված համարվելուն ներկայացվող պահանջը. նրանք մասնակցել են համապատասխան դասընթացի առնվազն 80%-ին:

Բացի դրանից, հաշվետու ժամանակահատվածում առաջարկված հեռաուսուցման դասընթացներին ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների մասնակցության աստիճանը եղել է բավականին բարձր: Մասնավորապես՝ ***դատավորների 84%-ը*** և ***դատախազների 63%-ը*** ապահովել են ***40*** ակադեմիական ժամին համարժեք (100%-անոց) մասնակցություն:

Միևնույն ժամանակ, հետաքրքրարժան են մասնակիցների՝ ինքնաստուգիչ հարցերին պատասխանելու արդյունքները: Մասնավորապես, նրանք բոլորը ճիշտ են պատասխանել նշված հարցերի ***50%-ից ավելին***: Ընդ որում, ***դատավորների*** և ***դատախազների*** ընդհանուր թվի ***40,3%-ը*** ճիշտ է պատասխանել վերոհիշյալ հարցերի ***90-100%-ին***:

## VI. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

- **Գրադարանավար-արխիվավարները հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ գրքային ֆոնդի լրահամալրում և գույքագրում, գրադարանի նոր՝ 2025 թվականի հավաքածուի (32 անուն, 38 օրինակ նոր գրականություն, այդ թվում՝ արտասահմանյան երկրներից ստացվող) կազմում, ցուցակագրում և հաշվառում,
  - ✓ Ակադեմիայի ունկնդիրներին և այլ հետաքրքրվողներին սպասարկելու գործընթացի շարունակական բարելավում,
  - ✓ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա գրանցամատյանում ընթերցողների գրանցում և սպասարկում, գրականություն որոնելու և գրադարանում առկա նյութերին ծանոթանալու գործում ունկնդիրներին օգնության ցուցաբերում,
  - ✓ ընթացիկ տարվա փաստաթղթերի արխիվացում, արխիվային նյութերի պահպանում և անհրաժեշտ փաստաթղթաշրջանառության վարում՝ գործող իրավակարգավորումներին համապատասխան,
  - ✓ ընթացիկ այլ աշխատանքներ:

- **Համագործակցության և հանրային կապերի բաժինը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**

  ***1) հայաստանյան, օտարերկրյա և միջազգային կառույցների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում, մասնավորապես՝***
  - ✓ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Հաշտարարների պալատի հետ համագործակցության հուշագրերի ստորագրման կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,
  - ✓ գործընկեր կառույցների և դրանց ներկայացուցիչների հետ համագործակցությամբ հանդիպումների, դասախոսությունների, սեմինարների, քննարկումների և այլ միջոցառումների կազմակերպում և դրանց մասնակցություն՝ առկա համագործակցության շրջանակներում,
  - ✓ միջազգային և օտարերկրյա (ԵԽ, ԵՄ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան ԹՊԻՀ գրասենյակ, ԵԱՏՄ դատարան, «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամ,

Մարդու իրավունքի և մարդասիրական իրավունքի Ռաուլ Վալլենբերգի անվան շվեդական ինստիտուտ, Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ) գործընկերների հետ համագործակցությամբ Ակադեմիայի աշխատակազմի ներկայացուցիչների մասնագիտական հմտությունների և կարողությունների կատարելագործմանն ուղղված սեմինարների, ճանաչողական այցերի, գործուղումների կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,

- ✓ ՌԴ Սանկտ Պետերբուրգ քաղաքում կայացած XIII Պետերբուրգյան միջազգային իրավաբանական համաժողովին Ակադեմիայի ռեկտորի մասնակցության կազմակերպական աշխատանքների իրականացում,
- ✓ Բուդապեշտում կայացած ԵՄ և ԵԽ համատեղ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» նախագծի «Կանանց արդարադատության մատչելիություն՝ ԵԽ գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության չափանիշների կիրառում» ծրագրի շրջանակում կազմակերպված «Գենդերային բացերի լրացումը» թեմայով աշխատաժողովին Ակադեմիայի պրոռեկտորի մասնակցության կազմակերպական աշխատանքների իրականացում,
- ✓ Մոսկվայում կայացած Համառուսական արդարադատության պետական համալսարանի 55-ամյա հոբելյանին նվիրված «Դերժավինյան ընթերցումներ» խորագրով XIX միջազգային գիտագործնական աշխատաժողովին Ակադեմիայի ռեկտորի մասնակցության կազմակերպական աշխատանքների իրականացում,
- ✓ Ստրասբուրգում կայացած Եվրոպայի Խորհրդի (ԵԽ) HELP «Մարդու իրավունքների կրթությունը իրավական ոլորտի մասնագետների համար» ծրագրի հերթական համաժողովին Ակադեմիայի պրոռեկտորի մասնակցության կազմակերպական աշխատանքների իրականացում,
- ✓ Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևյան կենտրոնի (DCAF) կողմից իրականացվող «Անվտանգության ոլորտի կառավարման և վերահսկողության խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակում Ակադեմիայի ռեկտորի ճանաչողական այցը Ժնև կազմակերպելուն մասնակցություն,

- ✓ հայաստանյան և միջազգային ու օտարերկրյա կառույցների հետ համագործակցությունը զարգացնելու նպատակով հաջորդ տարվա անելիքների ուրվագծում.

***2) Ակադեմիայի գործունեության հրապարակայնության ապահովում, մասնավորապես՝***

- ✓ Ակադեմիայի պաշտոնական կայքի (www.aoj.am) բնականոն աշխատանքի ապահովում, առաջացած խնդիրների լուծում,
- ✓ Ակադեմիայում անցկացվող միջոցառումների և ընդհանրապես՝ գործունեության (այդ թվում՝ ուսումնական գործընթացի) լուսաբանում, կայքում տեղեկատվության օպերատիվորեն տեղադրում (հայերեն, ռուսերեն, անգլերեն),
- ✓ հայաստանյան հեռարձակվող և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ համագործակցության ընդլայնում,
- ✓ հայաստանյան լրատվամիջոցներին մամուլի հաղորդագրությունների տրամադրում,
- ✓ մշտադիտարկումների անցկացում, արդյունքների գնահատում, տեղեկատվական էլեկտրոնային նյութերի արխիվացում,
- ✓ սոցիալական ցանցերում («Facebook», «Twitter», «Linkedin» «Telegram», «You Tube») Ակադեմիայի էջերի շարունակական զարգացում,
- ✓ Ակադեմիայում տեղի ունեցած և դրան վերաբերող միջոցառումների լուսանկարում և տեսանկարահանում, մոնտաժում, YouTube-յան ալիքում և պաշտոնական կայքում տեղադրում,
- ✓ «Wikipedia» հանրամատչելի հանրագիտարանում, «Սփյուռ» տեղեկատվական բազայում, «Արեգ» տեղեկատուում Ակադեմիայի ներկայացվածության ապահովում.

***3) այցերի, միջոցառումների կազմակերպում, մասնավորապես՝***

- ✓ պատվիրակությունների, աշխատանքային խմբերի, հայաստանյան և միջազգային գործընկերների, հյուրերի այցերի կազմակերպման արարողակարգային հարցերի լուծմանը ներգրավում.

4) ***հասարակայնության հետ կապերի զարգացում և ամրապնդում, մասնավորապես՝***
   - ✓ ներքին և արտաքին հաղորդակցության ամենօրյա պատշաճ իրականացում,
   - ✓ հեռախոսազանգերին և Ակադեմիայի info@justiceacademy.am, ինչպես նաև infojusticeacademy@gmail.com էլեկտրոնային փոստերին, սոցցանցերի էջերի միջոցով ուղարկված նամակներին և տեղեկատվության հարցումներին սահմանված ժամկետներում պատասխանների տրամադրում.

5) ***ընթացիկ այլ աշխատանքներ, մասնավորապես՝***
   - ✓ Ակադեմիայի ղեկավարության հանձնարարությունների կատարում,
   - ✓ համագործակցության և հանրային կապերի ոլորտում ընթացիկ այլ աշխատանքների իրականացում:

- **Անձնակազմի և փաստաթղթաշրջանառության բաժինը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
   - ✓ 155 աշխատանքային և ծառայությունների մատուցման պայմանագրերի կազմում և ստորագրման ապահովում (այդ թվում՝ նախապատրաստական դասընթացների կազմակերպման նպատակով),
   - ✓ 166 ներքին իրավական ակտերի, այդ թվում՝ աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման, արձակուրդի, խրախուսանքի և այլ ընթացիկ ներքին իրավական ակտերի նախագծերի կազմում,
   - ✓ աշխատակիցների կազմի, նրանց աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու վերաբերյալ տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի վարում,
   - ✓ սոցիալական փաթեթին առնչվող անհրաժեշտ աշխատանքերի կազմակերպում և իրականացում,
   - ✓ փաստաթղթաշրջանառության պատշաճ ապահովում՝ փաստաթղթերի մուտքագրում (664) և ելքագրում (375), դրանց պատճենահանում և հասցեատերերի հանձնում,
   - ✓ յուրաքանչյուր ամսվա վերջում Ակադեմիայի աշխատակիցների աշխատաժամերի հաշվարկի վերաբերյալ տեղեկագրերի, ինչպես նաև ամենամյա արձակուրդի գրաֆիկի կազմում,

- ✓ ըստ անհրաժեշտության՝ տեղեկանքների կազմում, ավարտական դիպլոմների հաշվառման մատյանների վարում, Ակադեմիայի ղեկավարությանը և կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում և ընթացիկ այլ աշխատանքների իրականացում:

- **Համակարգչային մասնագետը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ Ռեկտորի և Աշխատակազմի ղեկավարի անմիջական հանձնարարությունների կատարում,
  - ✓ համակարգիչների, սերվերների և հարակից սարքերի (տպիչներ, սկաներներ, անվտանգության տեսախցիկներ և այլն), լոկալ, WIFI և INTERNET ցանցերի, ինչպես նաև «Հոսթինգ» ծառայության («ABC դոմեն» ընկերության հետ համատեղ), էլեկտրոնային անցակետային համակարգի և հեռախոսային ցանցի ընթացիկ սպասարկում և թերությունների վերացում,
  - ✓ հակավիրուսային և այլ ծրագրերի միջոցով համակարգիչների, լոկալ, WIFI և INTERNET ցանցերի անվտանգության ապահովում,
  - ✓ աշխատակիցների, վերապատրաստվողների և դատավորների թեկնածուների հավակնորդների, դատախազների ու քննիչների թեկնածուների ներկայության վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում (ամփոփ, օրական և շարժի տեսքով),
  - ✓ գրավոր և բանավոր քննությունների տեսաձայնագրում և DVD սկավառակների վրա պահպանում,
  - ✓ պաշտոնական ձևաթղթերի, աշխատակիցների վկայականների, պատվոգրերի, շնորհակալագրերի և դատավորի, դատախազի, քննիչի թեկնածուների ավարտական դիպլոմների պատրաստում և տպագրում,
  - ✓ ընթացիկ այլ աշխատանքներ:

- **Հյուրանոցի ադմինիստրատորը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ ընդհանուր առմամբ 99 ունկնդրի (դատավորներ, դատավորի թեկնածուներ, դատախազներ, դատախազի թեկնածուներ, քննիչներ, քննիչի թեկնածուներ)

համար կացարանի և դրա հետ կապված համապատասխան այլ պայմանների ապահովում:

- **Տեխնիկատնտեսական բաժինը հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝**
  - ✓ վարչական շենքի հրշեջ-անվտանգությունն ապահովելու համար, երաշխավորված ժամկետի համաձայն, լիցքավորվել են նախատեսված 18 կրակմարիչներ,
  - ✓ կատարվել են տարաբնույթ վերանորոգման և հարդարման աշխատանքներ, ներկվել են բակային տարածքի ամբողջ երկարությամբ (150 գ.մ) եզրաքարերը, նույն տարածքում տեղադրված նստարաններն ու աղբամանները, ցանկապատը, կայանատեղիի գծանշումները,
  - ✓ հյուրանոցային համալիրի 5 սենյակներում իրականացվել են կապիտալ վերանորոգման (ընդհանուր 350 մ$^2$ մակերեսով) աշխատանքներ,
  - ✓ վերացվել են հարակից շինարարության պատճառով բակային տարածքի մի մասի փլուզման հետևանքները՝ վերատեղադրվել են խաչքար-հուշակոթողը, լուսավորության սյունը, եզրաքարերը, սալիկապատ հատակը, ցանկապատի թվով 5 ճաղավանդակները, գազի խողովակաշարերը, տնկվել են նոր ծառատեսակներ,
  - ✓ ջրի բարձր ճնշում ապահովելով և հատուկ քիմիական նյութեր օգտագործելով՝ մաքրվել են շենքային համալիրի ջեռուցման համար նախատեսված խողովակաշարն ու ջեռուցման մարտկոցները:
  - ✓ ընթացիկ վերանորոգման են ենթարկվել ճաշարանային հատվածի օդափոխման համակարգի համար նախատեսված սարքավորումները, տեղադրվել են նոր լուսամփոփներ, ավելացվել է տեսանկարահանման սարքերի քանակը,
  - ✓ ամենօրյա աշխատանքներ են կատարվել Ակադեմիայի շենքի և հարակից տարածքների շահագործման սանիտարահիգիենիկ կանոնների պահպանումն ապահովելու ուղղությամբ:

## VII. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիան՝ հիմնվելով ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներով հաստատված ***անընդհատության սկզբունքի վրա***, շարունակել է հաշվապահական հաշվառում իրականացնել «Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթներին և դրանից բխող իրավական ակտերին համապատասխան:

### 1. Եկամուտներ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի կողմից ապահովվել են մուտքեր՝ հետևյալ աղբյուրներից՝

1) Վերադաս մարմնի կողմից՝ «Վերապատրաստման ծառայություններ» ծրագրով դրամաշնորհի ձևով ստացված մուտքեր՝ ***239,475,600*** դրամ,
2) «Մասնագիական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ» ծրագրով ստացված մուտքեր՝ ***15,492,300*** դրամ,
3) ՀՀ քննչական կոմիտեին մատուցված վերապատրաստման ծառայությունների դիմաց ստացված մուտքեր՝ ***11,016,300*** դրամ,
4) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածուների կրթաթոշակի վճարման նպատակով ստացված մուտքեր՝ ***26,897,700*** դրամ,
5) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին մատուցված վերապատրաստման ծառայությունների դիմաց ստացված մուտքեր՝ ***812,700*** դրամ,
6) «Ակբա Բանկ» ԲԲԸ-ին մատուցված վերապատրաստման ծառայությունների դիմաց ստացված մուտքեր՝ ***990,000*** դրամ,
7) Ձեռնարկատիրական գործունեությունից այլ եկամուտներ՝ ***8,375,000*** դրամ:

### 2. Ծախսեր

Հաշվետու ժամանակահատվածում ծախսերը կատարվել են հետևյալ ուղղություններով.

| Անվանում | Գումար |
|---|---|
| Աշխատավարձի գծով ծախսեր | 166,461,389.00 |
| Պարգևատրումների, խրախուսումների և հատուկ վճարների գծով ծախսեր | 13,766,400.00 |
| Գործառնական և բանկային ծառայությունների գծով ծախսեր | 60,000.00 |
| Էներգիայի ծառայությունների գծով ծախսեր | 7,406,011.00 |
| Կոմունալ ծառայությունների գծով ծախսեր | 303,350.00 |
| Կապի ծառայությունների գծով ծախսեր | 1,005,307.00 |
| Ապահովագրության գծով ծախսեր | 22,500.00 |
| Արտագերատեսչական ծախսերի գծով ծախսեր | 4,014,000.00 |
| Վարչական ծառայությունների գծով ծախսեր | 2,000,100.00 |
| Կառավարչական ծառայությունների գծով ծախսեր | 1,756,000.00 |
| Ներկայացուցչական ծախսերի գծով ծախսեր | 2,431,740.00 |
| Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 1,374,282.00 |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսեր | 874,200.00 |
| Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերման գծով ծախսեր | 6,857,090.00 |
| Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծախսեր | 1,960,000.00 |
| Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով ծախսեր | 2,168,500.00 |
| Բյուջեից վճարվող կրթական, մշակութային և սպորտային նպաստների (հատուցումների) գծով ծախսեր | 41,213,680.00 |
| Այլ հարկերի գծով ծախսեր | 40,258,000.00 |
| Այլ ծախսերի գծով ծախսեր | 4,395,200.00 |
| Գրասենյակային նյութերի ու պարագաների (հագուստի) ձեռքբերման գծով ծախսեր | 337,640.00 |
| Տրանսպորտային նյութերի ու պարագաների ձեռք բերման գծով ծախսեր | 1,560,000.00 |
| Կենցաղային և հանրային սննդի նյութերի ու պարագաների գծով ծախսեր | 853,220.00 |
| Այլ հատուկ նպատակային նյութերի ու պարագաների գծով ծախսեր | 1,063,650.00 |
| Գույքահարկի հետ կապված ծախսեր | 23,800.00 |
| Աշխատավարձի գծով ծախսեր | 166,461,389.00 |

## VIII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

***Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով.***

- Ակադեմիայի գիտական խորհրդի երաշխավորությամբ հրապարակվել են «Բանբեր Արդարադատության ակադեմիայի» գիտագործնական հանդեսի հերթական՝ 14-րդ, 15-րդ և 16-րդ համարները, որոնցից առաջինը նվիրված էր Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 80-ամյա հոբելյանին:
- Շարունակվել են Ակադեմիայի պաշտոնական նոր կայքէջի (www.aoj.am) լավարկմանը և միջազգային ստանդարտներին դրա համապատասխանեցմանն ուղղված աշխատանքները:
- Իրականացվել է 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմված ֆինանսական հաշվետվությունների անկախ վերստուգում (աուդիտ), որի եզրակացությամբ՝ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ՀՀ հանրային հատվածի հաշվապահական հաշվառման մասին ստանդարտի համաձայն և բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ակադեմիայի ֆինանսական արդյունքները:
- Ձեռնարկատիրական գործունեության շրջանակներում՝
  1) դատավորների թեկնածուների, դատախազի և քննիչի թեկնածությունների ցուցակները համալրելու նպատակով անցկացվող մրցույթներին մասնակցելու ցանկություն ունեցող և այլ անձանց համար կազմակերպվել ու իրականացվել են նախապատրաստական դասընթացներ,
  2) «Ակբա Բանկ» ԲԲԸ աշխատակիցների համար կազմակերպվել ու իրականացվել է բանկային գործունեությանն առնչվող վերապատրաստման հատուկ դասընթաց:

**Ռեկտոր** **Ս.Վ. Առաքելյան**

# IX. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

## 1. Դատական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժին

***Աղյուսակ 1***

### Բաժնի գործունեությունը 2025 թվականի ընթացքում

| Ուսուցման տեսակ | Հայտագրված | Ուսուցում անցած (%) |
|---|---|---|
| **Մասնագիտական պատրաստում** | **12** | **12 (100%)** |
| ***Քրեական մասնագիտացում***<br>Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով մասնագիտական պատրաստում | **6** | **6 (100,0%)** |
| ***Քաղաքացիական մասնագիտացում***<br>Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով մասնագիտական պատրաստում | **2** | **2 (100,0%)** |
| ***Վարչական մասնագիտացում***<br>Վերաքննիչ դատարաններում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց գործնական հմտությունների զարգացման մասով մասնագիտական պատրաստում | **4** | **4 (100,0%)** |
| **Վերապատրաստում** | **547** | **511 (93,4%)** |
| ***Դատավորներ*** | **361** | **345 (95,6%)** |
| ***Դատական կարգադրիչներ*** | **186** | **166 (89.2%)** |
| **Հատուկ ուսուցում** | **269** | **195 (72.5%)** |
| ***Դատավորներ*** | **83** | **29 (34.9%)** |
| ***Դատական կարգադրիչներ*** | **186** | **166 (89.2%)** |
| **Ընդամենը** | **828** | **718 (86,7%)** |

***Աղյուսակ 2***

**Բաժնի գործունեությունը 2019-2025 թվականների ընթացքում**

| Տարի | Մասնագիտական պատրաստում | | Վերապատրաստում | | Հատուկ ուսուցում | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *Հայտ* | *Անցած (%)* | *Հայտ* | *Անցած (%)* | *Հայտ* | *Անցած (%)* | *Հայտ* | *Անցած (%)* |
| **2019** | 36 | 33 (91,7%) | 799 | 749 (93,7%) | 267 | 228 (85,3%) | 1 102 | 1 010 (91,7%) |
| **2020** | 27 | ***28* (110,0%)*** | 235 | 231 (98,2%) | 61 | 37 (60,6%) | 323 | 296 (91,6%) |
| **2021** | 27 | 26 (96,3%) | 610 | 593 (97,2%) | 397 | 354 (89,2%) | 1 034 | 973 (94,1%) |
| **2022** | 52 | 52 (100,0%) | 450 | 425 (94,5%) | 216 | 170 (78,8%) | 718 | 647 (90,1%) |
| **2023** | 45 | 42 (93,3%) | 513 | 487 (95,0%) | 293 | 219 (74,7%) | 851 | 748 (87,9%) |
| **2024** | 30 | 29 (96,6%) | 688 | 610 (88,7%) | 429 | 318 (74,1%) | 1 147 | 957 (83,4%) |
| **2025** | 12 | 12 (100,0%) | 547 | 511 (93,4%) | 269 | 195 (72.5%) | 828 | 718 (86,7%) |
| **Ընդամենը** | **229** | **222 (96,9%)** | **3 842** | **3 606 (93,9%)** | **1 932** | **1 521 (78,7%)** | **6 003** | **5 349 (89,1%)** |

***Գծապատկեր 1***




* 2020 թվականին ուսուցումն անցել է նախորդ տարի տարկետում ստացած 1 հավակնորդ:

## 2. Դատախազության և քննչական համակարգի ունկնդիրների ուսուցման կազմակերպման բաժին

***Աղյուսակ 3***

### Բաժնի գործունեությունը 2025 թվականի ընթացքում

| Ուսուցման տեսակ | Հայտագրված | Ուսուցում անցած (%) |
|---|---|---|
| **Մասնագիտական պատրաստում** | **89** | **80 (89,9%)** |
| *Դատախազի թեկնածուներ* | 15 | *ընթացքի մեջ* |
| *Պետական (համանքային) շահերի պաշտպանության գործառույթ իրականացնող դատախազների թեկնածուներ* | 5 (2024 թ.-ից) | 5 (100,0%) |
| *Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազի թեկնածուներ* | 5 | 5 (100,0%) |
| *ՀՀ ՔԿ քննիչի թեկնածուներ* | 79 | 79 (100,0%) |
| **Վերապատրաստում** | **541** | **518 (95,7%)** |
| *Դատախազներ* | 230 | 209 (90,9%) |
| *ՀՀ ՔԿ քննիչներ* | 255 | 236 (92,5%) |
| *ՀՀ ՔԿ ղեկ. Կազմ* | 73 | 68 (93,2%) |
| *ՀՀ ՀԿԿ քննիչներ* | 23 | 23 (100,0%) |
| **Լրացուցիչ վերապատրաստում** | **29** | **28 (96.6%)** |
| *Դատախազներ* | 4 | 4 (100,0%) |
| *ՀՀ ՔԿ քննիչներ* | 7 | 5 (71,4%) |
| **Հատուկ ուսուցում** | **183** | **154 (84,2%)** |
| *Դատախազներ* | 45 | 34 (75,6%) |
| *ՀՀ ՔԿ քննիչներ* | 60 | 45 (75,0%) |
| **Ընդամենը** | **796** | **713 (89,6%)** |

***Աղյուսակ 4***

### Բաժնի գործունեությունը 2019-2025 թվականների ընթացքում

| Տարի | Մասնագիտական պատրաստում | | Վերապատրաստում | | Հատուկ ուսուցում | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | *Հայտ* | *Անցած (%)* | *Հայտ* | *Անցած (%)* | *Հայտ* | *Անցած (%)* | *Հայտ* | *Անցած (%)* |
| **2019** | 70 | 67 (95,7%) | 442 | 415 (93,9%) | 68 | 53 (77,9%) | 580 | 535 (92,2%) |
| **2020** | 71 | 67 (94,3%) | 507 | 481 (94,9%) | 82 | 55 (67,1%) | 660 | 603 (91,4%) |
| **2021** | 123 | 117 (95,1%) | 507 | 482 (95,1%) | 67 | 43 (64,2%) | 697 | 642 (92,1%) |
| **2022** | 120 | 115 (95,8%) | 847 | 804 (94,9%) | 38 | 28 (73,7%) | 1 005 | 947 (94,2%) |
| **2023** | 92 | 89 (96,7%) | 518 | 478 (92,3%) | 263 | 231 (87,8%) | 873 | 798 (91,4%) |
| **2024** | 89 | 80 (89,9%) | 570 | 546 (95,8%) | 183 | 154 (84,2%) | 842 | 780 (92,6%) |
| **2025** | 99 | 89 (89,9%) | 592 | 545 (92,1%) | 105 | 79 (75,2%) | 796 | 713 (89,6%) |
| **Ընդամենը** | **664** | **624 (94,0%)** | **3 983** | **3 751 (94,2%)** | **806** | **643 (79,8%)** | **5 453** | **5 018 (92,0%)** |

***Գծապատկեր 2***




## 3. Գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժին

***Աղյուսակ 5***

**Բաժնի գործունեությունը 2019-2025 թվականների ընթացքում**

| Տարի | Ուսուցման ծրագրերի նախագծեր | Առարկայական ծրագրեր | Քննական նյութեր | Նոր դասընթացներ |
|---|---|---|---|---|
| **2019** | 16 | 118 | 42 | 33 |
| **2020** | 16 | 144 | 39 | 29 |
| **2021** | 17 | 90 | 54 | 25 |
| **2022** | 19 | 72 | 43 | 60 |
| **2023** | 26 | 85 | 62 | 19 |
| **2024** | 23 | 88 | 76 | 13 |
| **2025** | 16 | 27 | 21 | 6 |
| **Ընդամենը** | **133** | **624** | **337** | **185** |

***Գծապատկեր 3***




## 4. Հեռաուսուցման և SS դեպարտամենտ

***Աղյուսակ 6***

**Դեպարտամենտի գործունեությունը 2025 թվականի ընթացքում**

| Դասընթացներ | Հայտով ներկայացված | | Ուսուցում անցած (%) | |
|---|---|---|---|---|
| **Փաստարկում և հռետորաբանություն** | Դատավոր | Դատախազ | Դատավոր | Դատախազ |
| | 20 | 12 | 20 | 12 |
| | ***Ընդամենը՝ 32*** | | ***Ընդամենը՝ 32 (100,0%)*** | |
| **Կոռուպցիոն հանցագործություններ և անդրազգային կազմակերպված հանցավորություն. կոռուպցիոն հանցագործությունների և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի քրեադատավարական գործիքակազմը** | Դատավոր | Դատախազ | Դատավոր | Դատախազ |
| | 3 | 24 | 3 | 24 |
| | ***Ընդամենը՝ 27*** | | ***Ընդամենը՝ 27 (100,0%)*** | |
| **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարում** | Դատավոր | Դատախազ | Դատավոր | Դատախազ |
| | 14 | 29 | 14 | 29 |
| | ***Ընդամենը՝ 43*** | | ***Ընդամենը՝ 43 (100,0%)*** | |
| **Սեռով պայմանավորված, ընտանեկան բռնության և անչափահասների հանցավորության դեմ պայքարի քրեաիրավական և քրեադատավարական հիմնախնդիրները** | Դատավոր | Դատախազ | Դատավոր | Դատախազ |
| | — | 29 | — | 29 |
| | ***Ընդամենը՝ 29*** | | ***Ընդամենը՝ 29 (100,0%)*** | |
| **Դատավորի վարպետություն և դատական էթիկա** | Դատավոր | Դատախազ | Դատավոր | Դատախազ |
| | 26 | — | 26 | — |
| | ***Ընդամենը՝ 26*** | | ***Ընդամենը՝ 26 (100,0%)*** | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Միջազգային աշխատանքային իրավունք** | Դատավոր | Դատախազ | Դատավոր | Դատախազ |
| | — | 2 | — | 2 |
| | ***Ընդամենը՝ 2*** | | ***Ընդամենը՝ 2 (100,0%)*** | |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | **Դատավոր** | **Դատախազ** | **Դատավոր** | **Դատախազ** |
| | **63** | **96** | **63** | **96** |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | **159** | | **159 (100,0%)** | |

***Աղյուսակ 7***

**Դեպարտամենտի գործունեությունը 2019-2025 թվականների ընթացքում**

| | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Դասընթացներ** | 5 | 5 | 6 | 10 | 8 | 8 | 6 | **48** |
| **Հայտ ներկայացրած** | 169 | 308 | 166 | 164 | 163 | 126 | 159 | **1 255** |
| **Ուսուցում անցած (%)** | 169 (100,0%) | 307 (99,7%) | 163 (98,2%) | 161 (98,2%) | 162 (99,4%) | 126 (100,0%) | 159 (100,0%) | **1 247 (99,4%)** |

***Գծապատկեր 4***